## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԱՆՎԱՆԻ ՆԿԱՐՉՈՒՀԻ ԳԱՅԱՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հայ կերպարվեստը ծանր կորուստ կրեց: Կյանքից հեռացավ անվանի նկարչուհի, երազային գույների ու հեքիաթային կերպարների վարպետ Գայանե Խաչատրյանը:

Փարաջանովից հետո հենց նա դարձավ թիֆլիսահայ համայնքի յուրօրինակ խորհրդանիշը, ում անունը վաղուց դուրս է եկել երկրի եւ ազգային պատկանելիության սահմաններից: Նրա արվեստը իրապես ուղղորդում եւ լուսավոր կերպարներով մեզ տանում է դեպի լավատեսության մաքուր հորիզոններ:

Ավաղ, Վենետիկի աշխարհահռչակ բիենալեում նախատեսվող այս տարվա նրա անհատական խոշոր ցուցահանդեսն այլեւս կկայանա առանց Գայանե Խաչատրյանի:

Խորապես ցավակցում եմ մեծ նկարչուհու հարազատներին եւ նրա արվեստի երկրպագուներին: Մխիթարվենք նրանով, որ արվեստագետը մահկանացու է, իսկ նրա ստեղծածը՝ անմահ:

մայիս 2, 2009

## MESSAGE OF CONDOLENCE OF ARMENIA’S PRESIDENT SERZH SARGSIAN ON PASSING OF RENOWNED PAINTER GAYANÉ KHACHATURIAN

Armenian fine arts suffered a great loss. Gayané Khachaturian, renowned painter and master of fantastic colors and allegoric characters passed away.

After Parajanov she became the exemplary symbol of the Tbilisi Armenian community, whose name has long surpassed national and ethnic boundaries. Her art, through her luminous personages has indeed led us to bright horizons of optimism.

Alas, her major solo exhibition at this year’s International Art Biennale of Venice will take place without Gayané Khachaturian.

I present my deepest condolences to her relatives and enthusiasts of art. Let us console in the fact that the artist is mortal, but art created by her is eternal.

May 2, 2009